ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/322

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
Մասնակից՝ «Պրոֆ Ալ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ռ. Գևորգյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, կահույքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18931-2021 գրությամբ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի 12.11.2021թ.-ի գրության հիման վրա, 19.11.2021թ.-ին «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 19.11.2021թ.-ին:

19.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/322 համարի ծածկագիրը:

25.11.2021թ.-ին և 10.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.12.2021թ.-ին:

2. «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.11.2021թ.-ի գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Սույնով հայտնում ենք, որ 2021թ-ի հոկտեմբերի 29-ից մինչև նոյեմբերի 9-ը, ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի շենքում տեղի են ունեցել ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար «կահույքի» ձեռքբերման ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստերը:

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ1 թաղամաս Հ1, հեռ. +374 91 799907, էլ. Հասցե՝ tender@profal.am, ՀՎՀՀ՝ 01831375) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես. «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում իրականան շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում սահմանված ձևաչափին: Միաժամանակ, նկարագրում 2-րդ չափաբաժնի մասով բացակայում է առաջարկվող ապրանքի տեսքի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ 3-րդ չափաբաժնի մասով բացակայում է երաշխիքային ժամկետի և տեսքի վերաբերյալ տեղեկատվությունները:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով: 22.10.2021 թ-ին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով՝ ծանուցմամբ, «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից 09.11.2021թ-ին գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով շտկված փաստաթուղթ չի ներկայացվել, սակայն մասնակիցը շտկումը ներկայացնելիս զանգի միջոցով տեղեկացրել է, որ համակարգով շտկված փաստաթղթի ներկայացման պահին համապատասխան հաղորդագրությունը չի ստացել և այդ իսկ պատճառով շտկված փաստաթղթերը ներկայացրել է նաև էլեկտրոնային փոստի միջոցով հրավերում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով:

Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշել է տեղեկություն ստանալ ՀՀ ֆինանսների նախարարությունից՝ պաշտոնական գրությամբ: Հաշվի առնելով որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ողջամիտ ժամկետում պատասխան չի ստացվել՝ հանձնաժողովը որոշեց վերսկսել գնահատման գործընթացը, որի արդյունքում՝ հիմք ընդունելով «գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները՝ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ն մասնակցելով ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար իրականացված այլ մրցույթների, սահմանված ժամկետներով և

պատշաճ կերպով մատակարարել է որակյալ ապրանք (համաձայն պայմանագրերի) ու հանդիսանում է հուսալի գործընկեր:

Հաշվի առնելով օրենսդրության պահանջները (Կարգի 45-րդ կետ), Ձեզ ենք ներկայացնում առկա բոլոր փաստաթղթերը, սակայն խնդրում ենք, հնարավորության դեպքում, կազմակերպությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 19.11.2021թ.-ի գրությամբ դիմել է «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18931-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 23.11.2021թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՕ-2021/322 ընթացակարգը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 50-րդ հոդվածի 10-րդ մասի՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում

ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Հաշվի առնելով մատնանշված կարգավորումը՝ սույնով ներկայացնում ենք «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի դիրքորոշումը հարուցված ընթացակարգի վերաբերյալ.

1. ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որոշ փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, ինչի արդյունքում նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով:

2. 22.10.2021 թ-ին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին պատվիրատուի կողմից առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

3. Այնուհետ, նույն օրը՝ 22.10.2021 թ-ին, ժամը 10:09-ին, Պատվիրատուի գնումների մասնագետ Հասմիկ Գուլաբյանի պաշտոնական hasmik.gulabyan@nork.am էլեկտրոնային հասցեից «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ն ստացել է ծանուցում, որում նշված է հետևյալը.

«Հաշվի առնելով, որ շտկման ծանուցումները սխալ են ուղարկվել, մասնավորապես «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին ուղղված գրությունը ուղարկվել է Ա/Ձ Սահակյան Էդուարդին և հակառակը, ուստի խնդրում եմ շտկումների վերաբերյալ դիտարվեք այս նամակում գրվածը:»:

4. Այնուհետ, նույն օրը՝ 22.10.2021 թ-ին, ժամը 11:10-ին (այսինքն, 1 ժամ և 1 րոպե անց) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ն փորձել է էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն այդ համակարգի տեխնիկական անսարքության պատճառով ընկերությանը դա չի հաջողվել, ինչի հետևանքով ընկերությունը պահանջվող շտկումները պատասխան էլեկտրոնային նամակով ուղարկել է Պատվիրատուի գնումների մասնագետ Հասմիկ 9-ուլաբյանի պաշտոնական hasmik.gulabyan@nork.am էլեկտրոնային հասցեին (էլեկտրոնային նամակների պատճեները ներկայացվում են կից):

1. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետը սահմանում է, որ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ (...) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով

նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

(...)

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը (...):

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

5. Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ: Հաշվի առնելով գնումների գործընթացի քաղաքացիաիրավական բնույթը, Ընկերությանը՝ գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառումը հանդիսանում է քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց՝ Ընկերության կողմից գնումների գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորություններ ենթադրյալ խախտման համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (...) կատարելը: Նույն օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները: Իսկ օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ նորմերի՝ սույն գործի փաստերի հետ համադրության արդյունքում կարելի է գալ հետևյալ եզրակացության.

- *Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառումը կհանդիսանա քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց:*
- *Ընկերության նկատմամբ որևէ պատասխանատվության միջոցի կիրառումը կարողէ տեղի ունենալ միայն վերջինիս կողմից մեղքի առկայության պայմաններում:*

Այսպիսով, ինչպես արդեն նշվել է, 22.10.2021 թ-ին, ժամը 10:09-ին, Պատվիրատուի գնումների մասնագետ Հասմիկ Գուլաբյանի պաշտոնական hasmik.gulabyan@nork.am էլեկտրոնային հասցեից «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ն ստացել է ծանուցում, որում նշված է եղել, որ շտկման ծանուցումները սխալ են ուղարկվել, մասնավորապես «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին ուղղված գրությունը ուղարկվել է Ա/Ձ Սահակյան Էդուարդին և հակառակը, ուստի խնդրում եմ շտկումների վերաբերյալ դիտարկեք այս նամակում գրվածը: Այնուհետ, նույն օրը՝ 22.10.2021 թ-ին, ժամը 11:10-ին (այսինքն, 1 ժամ և 1 րոպե անց) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ն փորձել է

էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն այդ համակարգի տեխնիկական անսարքության պատճառով ընկերությանը դա չի հաջողվել, ինչի հետևանքով ընկերությունը պահանջվող շտկումները պատասխան էլեկտրոնային նամակով ուղարկել է Պատվիրատուի գնումների մասնագետ Հասմիկ Գուլաբյանի պաշտոնական hasmik.gulabyan@nork.am էլեկտրոնային հասցեին: Այսպիսով, ակնհայտ է, որ Ընկերությունը ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ բոլոր ջանքերը, որպեսզի օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կատարի գնահատող հանձնաժողովի պահանջը, սակայն իրենից չկախված պատճառով հնարավորություն չի ունեցել ներկայացնել շտկումները գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով:

6. Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:

Համադրելով վերոգրյալ հանգամանքները սույն գործի նկատմամաբ կիրառելի օրենսդրական պահանջների հետ, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ հենց պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրած գրության մեջ նշում է, որ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից սահմանված եղանակով շտկումներ չներկայացնելը եղել է վերջինից անկախ տեխնիկական խնդիրների պատճառով, ինչպես նաև այն, որ հենց պատվիրատուն է խնդրել չներառել ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում, գտնում ենք, որ օրենքի պահանջներից է բխում «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին այդ ցուցակում չներառելը:

Հաշվի առնելով վերոգրյալը Գնումների հետ կապված բողոք քննող անձին խնդրում ենք «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին չներառել ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2021/322 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով 12.10.2021թ.-ին հայտարարվել է «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.10.2021թ.-ից 29.10.2021թ.-ը տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում իրականան շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում սահմանված ձևաչափին: Միաժամանակ, նկարագրում 2-րդ չափաբաժնի մասով բացակայում է առաջարկվող ապրանքի տեսքի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ 3-րդ չափաբաժնի մասով բացակայում է երաշխիքային ժամկետի և տեսքի վերաբերյալ տեղեկատվաթյունները:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով, 22.10.2021թ.-ին որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Իսկ 29.10.2021թ.-ին որոշում է կայացվել մինչև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համակարգի աշխատանքի վերաբերյալ պարզաբանումների տրամադրումը՝ նիստը կասեցնել:

vi. Հանձնաժողովի 09.11.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, 09.11.2021թ.-ին արձանագրել է, որ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակներ:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

viii. Պատվիրատուի կողմից, Բողոքներ քննող անձին ներկայացված eauction.armeps.am համակարգից արված արտատպման համաձայն՝ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով գնման ընթացակարգին շրջանակում Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման և ներկայացման վերաբերյալ փաստաթուղթ չի կցվել:

ix. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2021թ.-ին ներկայացված թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/29281-2021 գրության համաձայն՝ «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին 21.10.2021թ.-ին ժամը 18:42:01 ուղարկվել է ծանուցում «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով: Մասնակիցը «Դիմում-Հայտարարության շտկում» էջ մուտք է գործել 22.10.2021թ.-ին ժամը 11:01:21-ից մինչև 22.10.2021թ.-ը ժամը 11:07:36-ը, սակայն վերջինիս կողմից շտկում չի ներկայացվել:

Միաժամանակ տեղեկացրել են, որ 22.10.2021թ.-ին էլեկտրոնային աճուրդների համակարգում խափանումներ չեն գրանցվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18931-2021 գրությամբ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի՝

- «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)

- «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու

պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով 17.09.2021թ.-ին հայտարարված «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով 12.10.2021թ.-ին հայտարարված «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.10.2021թ.-ից 29.10.2021թ.-ը տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 3-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում իրականան շահառուների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում սահմանված ձևաչափին: Միաժամանակ, նկարագրում 2-րդ չափաբաժնի մասով բացակայում է առաջարկվող ապրանքի տեսքի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ 3-րդ չափաբաժնի մասով բացակայում է երաշխիքային ժամկետի և տեսքի վերաբերյալ տեղեկատվաթյունները, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, իսկ 29.10.2021թ.-ին որոշում է կայացվել մինչև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համակարգի աշխատանքի վերաբերյալ պարզաբանումների տրամադրումը՝ նիստը կասեցնել: Սակայն Հանձնաժողովի

09.11.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով 09.11.2021թ.-ին արձանագրվել է, որ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակներ, ինչով պայմանավորված որոշում է կայացվել Մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Պատվիրատուի կողմից, Բողոքներ քննող անձին ներկայացված eauction.armeps.am համակարգից արված արտատպման համաձայն՝ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով գնման ընթացակարգին շրջանակում Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման և ներկայացման վերաբերյալ փաստաթուղթ չի կցվել:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2021թ.-ին ներկայացված թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/29281-2021 գրության համաձայն՝ «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին 21.10.2021թ.-ին ժամը 18:42:01 ուղարկվել է ծանուցում «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով: Մասնակիցը «Դիմում-Հայտարարության շտկում» էջ մուտք է գործել 22.10.2021թ.-ին ժամը 11:01:21-ից մինչև 22.10.2021թ.-ը ժամը 11:07:36-ը, սակայն վերջինիս կողմից շտկում չի ներկայացվել:

Միաժամանակ տեղեկացրել են, որ 22.10.2021թ.-ին էլեկտրոնային աճուրդների համակարգում խափանումներ չեն գրանցվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխա-

նություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/22» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18931-2021 գրությամբ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/322 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**